ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

Հայկազունիներ

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

Հայկազունիներ՝ թագավորական հարստություն Հայաստանում մ.թ.ա. 2492 - մ.թ.ա. 331 թվականներին: Կոչվում է հիմնադրի՝ Հայկ Նահապետի անունով: Որպես թագավորներ Հայաստանում հիշել են մ.թ.ա. 2492 - մ.թ.ա. 331 թվականներին:

Հայկազունիներ	
Տեսակ	արիստոկրատիա և նախարար
Մասն է	Հայ ազնվականություն
Երկիր	Մեծ Հայք Փոքր Հայք,
Տիրույթներ	Մեծ Հայք Փոքր Հայք
Ծագում	Հայկ Նահապետ
Տիտղոսներ	Հայքի թագավոր Մեծ Հայքի Արքա Ծայրի արքա Փոքր Հայքի արքա Կոմմագենի արքա
Հիմնադիր	Հայկ Նահապետ
Հիմնում	մ.թ.ա. 2492
Ավարտ	մ.թ.ա. 331
Ազգային պատկանելիություն	Հայ
Կրոնական դյուղեր	Երվանդունիներ, Քաղդանիներ

Պատմություն

Ըստ Մովսես Խորենացու և այլ հայ պատմագիրների՝ Հայկից է սերում Հայկազունիների արիստոկրատիան: Այդ ազնվական հարստության վերջին ներկայացուցիչը՝ Վահե արքան զոհվեց Գավգամելայում, Հայրն Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից պաշտպանելիս:

Ժառանգներ

«Հաքեթի սերունդների ցանկը սահմանել և առաջադրել է Մովսես Խորենացին, որպես Հին Կտակարանի ազգաբանության ցանկերին այլընտրանք, բանզի, Պատմահայրը բողոքում է. «Սուրբ գիրքը յուրայիններին (իրեանցիին. հեղ) զատելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսներին լքեց, իբրև արհամարհելի և իր կողմից ճշտանկվելու անարժան...(հավելելով) մեր Հաքեթի սերունդները բալորվին չկան»: Խորենացին առաջադրել է սեփական՝ Նայի Հաքեթ որդու ազգաբանության ցանկ, հավելելով, որ այն ավելի հավասար է, քան Ծննդոց բաժնի ցանկերը, քանի որ այնտեղ Հաքեթի սերունդները բացակայում են (Մ. Խորենացի, ՀՊ, էջ՝ 77-78): Ի տարբերություն իրենից առաջ և հետո պատմությունները գրող պատմիչների, Պատմահայրը ազնվորեն թվարկում է, թե Հաքեթի ազգաբանությունը ճշտելիս, ինքը ինչ աղբյուրներից է օգտվել՝ Աբյուդենոս, Կեփալոն, հունարեն գրականություն, իսկ Հին Կտակարանի Ծննդոց բաժնի ազգանության ցանկերը որևէ հավաստի աղբյուրներ չունեն: Սկսած Խորենացուց, մեր բոլոր պատմիչները անփոփոխ են թողել «Հաքեթից սկսվող ազգաբանության», այդ թվում «Առաջին հայկյանների»՝ Հայկից մինչև Արա Գեղեցիկ» Հայկազունի առաջնորդների ցանկը:

Ըստ Խորենացու մի շարք հայոց ազնվական տոհմեր իրենց ակունքների սկիզբ են համարում Հայկ Նահապետին: Դրանցից են Բզնունիները, Խորխոռունիները, Մանդակունիները, Վահևունիները, Վարաժնունիները, Առանշահիկները և այլն: Ժամանակակից գիտնականների մի մասը այլևս հրաժարվում է դիտարկել Հայկին որպես զուտ առասպելական անձ և հակված է ներկայացնել նրան որպես հայոց հերթական թագավոր, ով մեծ ավանդ է ունեցել հայկական արժեհամակարգի պահպանման և տարածման գործում[1]:

Հայկազունիների տոհմածառը



Մանրաթղթագրություններ

1. Պ.Մ.Հերունի, *Հայերը և հնագույն Հայաստանը*, Երևան 2006 թ.

Աղբյուրներ

- Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն

Տես նաև

- Երվանդունիներ
- Հայկ և Բել

Արտաքին հղումներ

- Հայկ թագավորը (http://gardmanq.do.am/news/hayk_t_39_agavor/2014-02-06-7)

Այս հոդվածի կամ նրա բաժնի որոշակի հատվածի սկզբնական կամ ներկայիս տարբերակը վերցված է Քրիէյթիվ Քոմմոնս Նշում-Համանման տարածում 3.0 (Creative Commons BY-SA 3.0) ազատ թույլատրագրով բաշխվող Հայկական սովետական հանրագիտարանից (հ. 6, էջ 169):

Դ·Փ·Ս (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%80&action=edit) [Բացել]

Դ·Փ·Ս (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%AB%D5%B6_%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%AB%D6%81%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6&action=edit) [Բացել]

Ստացված է «https://hy.wikipedia.org/wiki/Հայկազունիներ&oldid=8671062» էջից